


456



1914

ՀԱՅՐ ՅԵՐԱԿԱՆ ՊԵԿԱԿԱՆ ՀԱՅՈՒԹ

Ապրիլի

№ 4

«ԲԺԴ» կ ԳՐԱԴԱՐԱՆ


№ 4

338

BRÜDER GRIMM

ԽԵԼՕՔ ԵՂԻՍԱԲԵՐ

Թարգմ. գերմ. Հ. Պանիրեան



ԹԱՀԻԹԻԶ
այ թեմակ. տպարան
1914

2004

835.
9-90

17734

«ԱՅ» ԳՐԱԴԱՐԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿԻԹԻՒՆԵՐԸ

- 1) Գեղեցկութիւն, սէր, թէ նեմառ-
սորիւն. Գիւն է 2 շահի կամ 2 կոպէկ:
- 2) Արագիլ խալիթայի պատմութիւնը
Գիւն է 6 շահի կամ 5 կոպէկ:
- 3) Իմ ուղեկցութիւն: Գիւն է 5 շահի
կամ 5 կոպէկ:
- 4) Խելօֆ Եղիսաբէք, Գիւն է 4 շահի
կամ 4 կոպէկ:

Գիւն է 4 շահի կամ 4 կոպէկ.



ԽԵԼՕՓ ԵՂԻՍԱԲԷՔ

(Brüder Grimm*)

Հինում է չի լինում /մի մարդէ
լինում, որ ունէր մի աղջիկ՝ խելօֆ Եղի-
սաբէք, անունով՝ Երթ նա մեծացաւ և
հասունացաւ, հայրն առաց.

* «Այ» գրադարանի 4-րդ զրքոյկը
յատկացնում ենք դարձեալ մանկական ընթեր-
ցանութեան համար, տարով այս անգամ մէկը
Grimm եղբայրների հաւաքած զրոյցներից, ո-
րոնք մեր մանուկ ընթերցողների համար ըն-
թերցանութեան հետաքրքիր նիւթ են և որոն-
ցից շատ քչերը՝ հազիւ մի քանիսն են թարգ-
մանեած հայերէնի, բացի ի հարկէ բանատեղծ
Յովհ. Թումանեանի նոր սկսած թարգմանու-
թիւնը այդ հեքեաթների, որի գեռ երկու պը-
րակն է միայն լոյս տեսել և մեր՝ պարսկահայ
երախաների ձեռքը չի հանել տակաւին. Հ.Պ.

— Կնիկ, եկ սրան ամուսնացնենք:
— Ի հարկէ, ասաց մայրը, եթէ միալն
նրան ուզող լինի:

Մի անգամ, չեսու տեղերից մի երբառասրդ յայտնւեց՝ Հանէս անունով և
նրա ձեռքը խնդրեց, այն պալմանով, որ
Եղիսաբեթը իրօք խելօք և մատացի աղջիկ լինի:

— Օ՛, պատասխանո մէ հայրը, իմ եղիսաբեթը իր գլխում ծովի չափ խելք
և իմաստութիւն ունի:

— Նա քամիների ճանապարհը գիտէ և
ճանճերի լեզուն հասկանում է, ասում
է մայրը:

— Շատ լաւ, ասում է Հանէս, եթէ
ձեր ասածին պէս չը լինի, ես նրան չեմ
առնի:

Երբ նրանք սեղան նստեցին ճաշեւ,
մայրն ասաց.

— Եղիսաբեթ, գնա մառան և գարե
ջուր բեր:

Խելօք Եղիսաբեթը իսկոյն վերցրեց
ամանը, գնաց մառան, ճանապար-
հին գարեջը ամանի կափարիչը պինդ

չի չիկացնէ լով, որպէսզի ժամանակը եր-
կար և տաղտկալի չերեալ: Եւ երբ ներքե-
էր իջել, վերցրեց մի փոքրիկ նստարան,
դրեց տակաւի տռաջ, որպէսզի լցնելիս
չոտիսցի ծուել և տրպիսով իր աւսերը
ցաւ եցնել և վնասել: Այնժամանակ ամանը
տռաջ պահեց և ծորակը պատացրեց.
և մինչեւ գարեջուրը ամանի մէջ կը լցւէր,
որպէսզի նրա աչքերը անգործ չմնան,
նա պատի վրայ այս ու այն կողմը նա-
յեց, երբ յանկարծ տեսաւ այնտեղ մի
բրիչ, որ որսնագինը բը մօռացմամբ
այնտեղ էին թողել: Այն ժամանակ խե-
լօք Եղիսաբեթը սկսեց հոնքուր-հոնքուր
լոց լինել և առում էր.

Երբ Հանէսը ինձ առնի և մենք մի
երախալ ունենանք և նա մեծանայ և
մենք նրան ուղարկենք մառան գարեջուր
բերելու, այն ժամանակ այս բրիչը
պատի վրայից կորող է ընկնել բալիկիս
գլխին և նրան սպանել:

Այս առելով, նա նստեց այստեղ և ամբողջ
ուժով լացում և աղաղակում էր. կարծես
թէ իրօք անբաղդութիւնը պատահել էր:

Այնտեղ վերեռում՝ սենեակում խմիչքի էին սպասում, սակալն Խելօք Եղիսաբեթը չկար ու չկար: Այն ժամանակ կինը ասաց ազախնին:

—Գնա՞ մասան և տես, թէ ինչու է Եղիսաբեթը ուշանում:

Ազախնը գնում է և զտնում նրան տակառի տառջ նստած՝ բարձր ձայնով սղբալիս:

—Եղիսաբեթ, ինչու ես լացում, հարցնում է նրան ազախնը:

—Ա՛խ, պատասխանում է նա, ինչպէս լաց չինեմ. չէ որ երբ ես և Հանէսը մաւանանք և մի երախալ ունենանք և նա մեծանալ ու գալ այստեղից խմիչք տանի, այնժամանակ ահա այն բրիչը կարող է ընկնել նրա գլխին և նրան մեռցնել:

—Վայ, վայ, ինչքան խելօք է Եղիսաբեթը, ասում է ազախնը և նստելով նրա կողքին, ինքն էլ սկսում է լաց լինել որդ գժբաղկութեան վրայ:

Երբոր ազախնը չը վերտպարձաւ և այնտեղ՝ վերեռում ճաշաղները ծարա-

ւում էին, այս անգամ մարդը ծառ ային ասաց.

—Գնա՞ ներքե՝ մասան և տես, թէ Եղիսաբեթն ու ազախնը ուր մնացին:

—Ծառան ներքե գնաց և տեսաւ, որ Խելօք Եղիսաբեթը և ազախնը նստել են այնտեղ և ձեն ձենի տւած լաց են լինում: Այս տեսնելով ծառան հարցնում է նրանց:

—Ինչու էք լաց լինում:

—Ա՛խ, ասում է Եղիսաբեթը, ինպէս կարող եմ լաց չը լինել. երբ ես Հանէսի հետ պատկեմ, և մենք մի երախալ ունենանք և նա մեծանալ ու գալ խրմիչք տանելու, այն ժամանակ այս բրիչը կարող է ընկնել նրա գլխին և նրան սպանել:

—Ինչքան խելօք է Եղիսաբեթը, ասում է ծառան և նստելով նրանց կողքին սկսում է լալ և վախտասուն բարձրացնել:

Վերեռում սպասում էին ծառալին, սակայն երբ նա չեր զալիս ու չեր զալիս, մարդը կնկան ասաց.

— Ա ի անգամ զու գնա մառան և տես,
ուր մնաց Եղիսաբեթը:

Կինը Ներքեւ գնաց և երեքին միտսին
դառն լաց ու սղի մէջ, և երբ որ նրանց
լաց ու կոծի պատճառը հարցուց, այն
ժամանակ Եղիսաբեթը պատմեց, թէ
ինչպէս իրենց ապագայ որդին կարող է
այս բրիչով մեռնել, երբ նա մեծանու-
րով գալ գարեջուր տանելու և այս
բրիչը լանկարծ նրա գլխին ընկնի:

— Իրօք, ինչքան խելացի և հեռատես
է իմ Եղիսաբեթը, առում է մարրը նոյն
պէս. նստում և սկսում նրանց հետ լաց
լինել:

Մարգը վերեսմ սպասում էր զեռ
և մի ժամանակ լետով, երբ կինն էլ չը
վերագարձաւ, իսկ միւս կողմից իր ծա-
րաւը աւելի և աւելի սաստկանում էր,
առաց.

— Ես ինքո պէտք է անձամբ մառան
գնամ և տեսնեմ, թէ ուր մնաց Եղիսա-
բեթը:

Այս ասելով, նա մառան իջառ և
տեսոււ, որ բոլորը հաւաքւել են այն-

տեղ ու լաց են լինում, և երբ իմացաւ,
որ ալս բոլորի պատճառը Եղիսաբեթի
ապագայ որդին է, որ եթէ ծնւելու լի-
նի, կարսդ է այն բրիչը պատահմուն-
քով ցած ընկնել նրա գլխին ճիշտ
այն ժամանակ, երբ սա գալու կը լինի
գարեջուր տանելու: Հայրը այս որ իմա-
ցաւ՝ ազագակեց.

— Իրօք, ինչքան խելացի և հեռատես
ազջիկ է իմ Եղիսաբեթը: Այս ասելով,
նստեց նրանց մօտ և սկսեց ինքն էլ
լաց լինել:

Փեսացուն երկար մնաց վերեսմ
մենակ և տեսնելով որ գնացողներից ոչ
ոք չի վերագառնում՝ մտածեց, թէ գուցէ
այնտեղ՝ ներքեսմ իրան սպասում են.
վեր կացաւ, ինքն էլ գնաց տեսնելու
համար թէ այնտեղ ցածում՝ մառանում
ինչ է կատարում: Երբ նա ներքե-
զնաց, տեսոււ, որ հինգն էլ նստել են
և մէկը միւսից աւելի խղճալի և աւելի
բարձր ձայնով ապագակում են և ողբում:

— Ի՞նչ գժբազգութիւն է պատահել,
հարցնում է նա.

— Աշխ, սիրելի Հանէս, տառւմ է Եղիսաբեթը, երբ մենք ամուսնանալու լինենք և եթէ մի երեխալ ունենանք եկթէ նրան ազարկելու լինենք ալտեղ ըմպելիք բերելու, չէ որ կտրող է այստեղ՝ վերեւում գրտծ բրիչը ընկնել նրա գլխին և զրու իր ջարգել, այն ժամանակ մենք չէ որ լոց պէտքէ լինենք:

— Ալգալէ՛ս, տառւմ է Հանէս, իմ տան անտեսութեան համար գրանից աւելի խելք և իմաստութիւն հարկաւոր չէ. և սրադհեան դու ալգալէս խելօք Եղիսաբեթ ես, ես ուզում եմ քեզ կնութեան տոնել:

Այս տաելով, բանեց նրա ձեռքից, մառանից գուրս հանեց, ապա հարսանիք բանեցին և ամուսնացան:

II

Խելօք Եղիսաբեթն ու Հանէսը պըստելուց լիտոյ երբոր բաւական ժա-

մանակ միտսին ապրեցին, մի անգամ Հանէսը ասաց Եղիսաբեթին.

— Կնիկ, ես գրսերում աշխատանքի պիտի գնամ՝ փող վաստակելու համար. դու եւ գնա գաշտ, հացահատիկներ հաւաքիր, սրպէսզի հաց պատրասես:

— Ի հարկէ, սիրելի Հանէս, ես այդպէս եւ կանեմ, պատասխանում է Խելօք Եղիսաբեթը:

Երբ Հանէս տնից ստքը գուրս է գընում, Խելօք Եղիսաբեթը անմիջապէս գործի է կտրչում. նա իր համար համեղ կարկանդակներ և գամժալ է թխում և իր այդ պաշարը շարտկած՝ գաշտ է գնում: Երբոր մօտենում է արտին, ինքն իրեն հարց է տալիս.

— Խնչ պիտի անել ամենից տռաջ, ցորենը քաղեմ թէ տռաջ հաց ուտեմ: Ե՞, ի հարկէ պէտք է տռաջ հաց ուտել, յետոյ աշխատանքի սկսել:

Այս տաելով, նա բաց արաւ իր կըճուճը և միջի համեղ կարկանդակները, որոնց հստը նրա տիսրժակը զբգուռմ էր, անուշանուշ կերաւ և կշատնալուց

լետոյ դարձեալ իրեն հարց տէ եց.

— Այժմ ինչ պիտի անեմ, նախ ցուրեն հաւաքեմ, թէ նախ քնեմ: Ե՞, ի հարկե, ամենից առաջ պէտք քնել, յետոյ վեր կենալ ցորեն հաւաքել:

Սաց թէ չէ՝ պառկեց ցորենի հասկերի հսկում և մշկեմշիկ քնեց:

Երեկոյեան Հանէս վաղուց տուն էր վերաբերել, սպասում էր ու սպասում, սակայն Խելօք Եղիսաբեթ տուն չէր գալիս:

Իրօք, ինչքան խելօք և ջանանէր է իմ Եղիսաբեթը, որ մի անգամ գոնէ տուն էլ չի գալիս հաց ուտելու համար:

Եւ երբ Եղիսաբեթ հանգից չի վերաբառնում, որն էլ մթնում է և կէս գիշեր է լինում, Հանէսը սկսում է մըտաանջւել. նա անից դուրս է զալիս նրան որսնելու և մէկ էլ տեսնելու թէ իր կինը ինչքան հացահատիկ է հաւաքել: Բայց ինչքան մէծ է լինում Հանէսի զարմանքը և առլու կտրում, երբ տեսնում է, որ Խելօք Եղիսաբեթը մի հատ հատիկ անգամ չի հաւաքել, այլ երկարել է ցորենի արտի մէջ և փար-

թամ հասկերի հսկում անուշ քուն մըած՝ խոմփացնում է:

Այս տեսնելով, Հանէսը սուս ու փուս տուն է վազում, վեցնում է թելերից հիւսած թռչնորսական ցանց՝ փոքրիկ բոժոժներով, որոնք շարժւելիս զըրբնում չըխչխկում էին և զգուշութեամբ փաթաթում է Եղիսաբեթին, երբ սա շարունակում էր խոր ու անուշ քընանալ: Այնուհետեւ նա վերաբառնում է տուն, տան գուռը պինդ փակում և նստում է իր գրասեղանի տուաջ աշխատելու:

Երբ բոլորովին մոթը կոխում է, Խելօք Եղիսաբեթն արթնանում է քնից, աչքեր ճմուռմ, դէս ու դէն է նախում և երբ վեր է կենում կանգնում: Նրա չորս կողմը լիբշշում է և բոժոժները զընզինզում են իւրաքանչըւր քալլափոխին: Այս բանից նա շատ է վախենում և շփոթւած՝ մտածում, թէ արգեօք իրօք ինքը Խելօք Եղիսաբեթն է, և հարցնում է ինքն իրեն.

— Ես ես եմ, թէ ես ինքս չեմ:

Եւ չգիտէր իր այս հարցին ինչ
պատասխան տար, դրա համար էլ երկար
ժամանակ կանգնած մնում էր այնաեղ
շփոթութեան և կառկածանքի մէջ:

Վերջապէս որոշում է տուն վերա-
դառնալ և այնաեղ ստուգել, թէ իրօք
այս ինքն է թէ ինքը չէ. որովհետեւ
տանը անշոշտ այդ լաւ կիմանան, մը-
տածում է ինքն իրեն և վազում է գե-
պի տուն, կանգնում է գռան առաջ,
տեսնում է, որ տան դուռը պինդ կող-
պըւած է: Նա թըխթխացնում է պա-
տուհանը և կանչում է.

— Հանէս, Եղիսաբեթը տանն է թէ ոչ:

— Այն, պատասխանում է Հանէսը,
նա այստեղ՝ ներսումն է:

Այս որ լսու մ է Եղիսաբեթը սար-
սափում է և տոսւմ.

— Ասունձ ի՞մ, եթէ այդպէս է, այն
ժամանակ էս ես ինքո՛ Եղիսաբեթը չեմ:

Նա վագեց հարեանի գռան մօտ,
բազիսէց, որ բաց անեն, սակայն մար-
դիկ բոժոժների հնչիւնը լսելով չէին

վատահանում գուռը բաց անել. այնպէս
որ նո ոչ մի տեղ ապաստարան չը գրա-
նելով, գիւղից գուրս գնաց և ոլլ և ո
ոչ ոք նրան չը տեսաւ:



216

5n.

26m

49

456

Արքային գրադարանի պահպանության
Հայոց մատուցության և առաջարկության
հայոց և պատմական աշխարհության
հայոց և պատմական աշխարհության
հայոց և պատմական աշխարհության

183300

BL

2013



